



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

12 փետրվարի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/1Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 39 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, բնապահպանության, կազմակերպական վարչությունների պետերը:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2021 թվականի փետրվարի 12-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.

1) Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3) Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

4. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

6. Լյուդմիլա Մարգարյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

7. Էռնեստ Ավանեսով – Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ

Հ. Մարությանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Էդուարդ Ավետիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Մանրիկյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Հրաչյա Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սերգեյ Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 310-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Լիլիթ Պիպոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի մարտի **16**-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» **N405**-Ն որոշման հավելվածում (այսուհետև՝ **Հավելված**) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի **6**-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ **5**-րդ ենթակետով՝

«5) կառուցապատվող օբյեկտի շինարարական հրապարակում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա ծառերի, թփերի և կանաչ տարածքների (կանաչ տնկարկներ, բուսածածկ տարածքներ, կանաչ տնկարկների կամ բուսածածկի համար նախատեսված հողաշերտեր) պաշտպանության և դրանց վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման միջոցառումների կազմակերպում:»

2) Հավելվածի **7**-րդ կետի **3**-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3) շինարարական հրապարակը կազմակերպվում է հաստատված նախագծի (կամ հատակագծի) հիման վրա, որտեղ շինարարական նախապատրաստական և հիմնական փուլերի իրականացման գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ է ներառել գեոդեզիական աշխատանքների հիման վրա կատարված մանրամասն հանույթ՝ շինարարական հրապարակի սահմաններում ներառված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա առանձին կանգնած ծառերի և թփերի նշահարմամբ:»

3) Հավելվածի **7**-րդ կետի **4**-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4) շինարարական հրապարակը ցանկապատվում է բացառապես հաստատված նախագծով սահմանված ձևով և նույն նախագծով նախատեսված նյութերով: Նախագծով պաստառի օգտագործում նախատեսված լինելու դեպքում շինարարական հրապարակը ցանկապատվում է բացառապես Երևան քաղաքում շինարարական հրապարակների ցանկապատման համար նախատեսված պաստառով, որի ձևավորումը հաստատվում է Երևանի քաղաքապետի որոշմամբ և հրապարկվում է Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման և տպագրման համար նախատեսված ձևաչափով:»

4) Հավելվածի **7**-րդ կետի **5**-րդ ենթակետի ա) պարբերությունում «պատկեր» բառից հետո լրացնել «, որը պետք է ներառի նաև հաստատված նախագծով նախատեսված՝ օբյեկտի հարակից տարածքների կանաչապատումը՝ ծառերը, թփերը և կանաչ տարածքները» բառերը

5) Հավելվածի **7**-րդ կետի **5**-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ժա. պարբերությամբ՝

«ժա. մինչ կառուցապատումն առկա, ինչպես նաև հաստատված նախագծով նախատեսվող կանաչ տարածքների մակերեսները, ծառերի և թփերի քանակները, տեսակները:»

6) Հավելվածի **7**-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ **11**-րդ ենթակետով՝

«11) շինարարական հրապարակի կազմակերպման պահից Կառուցապատողը պետք է կազմակերպի նաև շինարարական հրապարակի սահմաններում ներառված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա ծառերը, թփերը և կանաչ տարածքները մեխանիկական կամ այլ վնասվածքներից պաշտպանելու հետևյալ միջոցառումները.

ա. կանաչ տարածքները եզրագծով ցանկապատել մետաղյա կամ այլ կոշտ նյութերով, բացառությամբ սիզամարգերի միջով խողովակների, մալուխների կամ այլ կապուղիների անցկացման շինարարական աշխատանքների դեպքում: Ցանկապատի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս, քան **1,5** մետր, այն կարող է ամրացվել մետաղյա կամ փայտե սյուներով, որոնք կարող են որոշակի խորությամբ ամրացվել հողի մեջ այնպես, որ չվնասեն մոտակա ծառի արմատները,

բ. եթե առկա են առանձին ծառեր կամ թփեր իրենց բնաբաժակներով, ապա դրանք ծառի բնից կամ թփից առնվազն **0,5** մետր հեռավորությամբ ցանկապատել փայտե տախտակներով կամ այլ կոշտ նյութերով: Ցանկապատի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս, քան **1,5** մետր, այն կարող է ամրացվել մետաղյա կամ փայտե սյուներով, որոնք կարող են որոշակի խորությամբ ամրացվել հողի մեջ այնպես, որ չվնասեն մոտակա ծառի արմատները: Ցանկապատի ամրությունը պետք է բավարար լինի մեխանիկական հարվածներից ծառի բունը կամ թուփը պաշտպանելու համար,

գ. բացառել ծառերի սաղարթից և թփերից մինչև **1,5** մետր հեռավորության վրա որևէ շինարարական նյութի կուտակումը կամ պահպանումը, ծանր տեխնիկայի կայանումը, բաց գրունտի վրա ասֆալտի, բետոնի կամ այլ շաղախի պատրաստումը: Նմանատիպ աշխատանքների կատարման հրատապ անհրաժեշտության կամ անխուսափելիության դեպքում շաղախի պատրաստման մակերեսը պետք է ծածկվի հաստ, անջրաթափանց թաղանթով, որով կբացառվի դրա արտահոսքը դեպի կանաչ տարածք, ծառերի և թփերի արմատային համակարգ,

դ. բացառել ծառերի սաղարթից և թփերից մինչև **1,5** մետր հեռավորության վրա ծանր տեխնիկայի կիրառումը, որը կարող է հողի վրա ուժեղ մեխանիկական ճնշում գործել և բերել դրանց արմատային համակարգերի վնասման,

ե. բացառել ծառերի և թփերի արմատային համակարգերի հնարավոր տարածման սահմաններում որևէ տեսակի հողի լիցքը, հողի քերումը և արմատային համակարգի մերկացումը: Ծառի արմատային համակարգի պահպանության մակերեսը հաշվարկվում է ըստ ծառի բնի տրամագծի՝ մինչև **15** սանտիմետրի դեպքում **2** մետր, իսկ **15** սանտիմետրից ավելի դեպքում՝ **3** մետր,

զ. եթե աշխատանքները կատարվում են մայիսից մինչև սեպտեմբերը ներառյալ ամիսներին, ծառերը և թփերն առնվազն **3** օրը մեկ անգամ ոռոգել, իսկ փոշու զգալի արտանետում առաջացնող շինարարության դեպքում՝ **7** օրը մեկ անգամ դրանք լվալ անձրևացման եղանակով,

է. շինարարական աշխատանքների ավարտից հետո զգուշությամբ հեռացնել շինարարական տեխնիկան, սարքավորումները, ցանկապատերը, պաստառները և այլ նյութերը՝ բացառելով ծառերի, թփերի և կանաչ տարածքների վնասումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **2021** թվականի ապրիլի **1**-ից, բացառությամբ որոշման **1**-կետի **3)**-րդ ենթակետի դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **37** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **33**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Սուրեն Էյրամջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի մասին» N**186**-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի.

1) եկամուտների գումարը նվազեցնել **603,394.2** հազար դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել **603,394.2** հազար դրամով,

2. Որոշման NN **1, 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN **1-5** հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **38** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **33**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ